# ԹԵՄԱ 1 ԵՎՐՈՊԱ

## ԴԱՍ 1.16. Ֆրանսիայի տնտեսությունը

*Ֆրանսիական դասականներից մեծ ճանաչում ունեն նկարիչներ Է. Մանեն, Օ. Ռենուարը, Ա. Մատիսը, Պ. Պիկասոն, Պ. Սեզանը, քանդակագործներ Շ.Դալուն, Օ. Ռոդենը և ուրիշներ:*

*Փարիզում է հասունացել Մ.Մալիբրանի վոկալ արվեստը, կոմպոզիտորներ Հ. Բեռլիոզի, Սեն Սանսի, Ժ. Բիզեի, Շ.Գունոյի երաժշտական արվեստը: Ֆրանսիայում է ծաղկել շանսոնը: Խոշորագույն շանսոնյեներ են Մ. Շևալիեն, Է. Պիաֆը, Շառլ Ազնավուրը: Համաշխարհային ճանաչում ունեն ֆրանսիացի դերասաններ Ժ. Գաբենը, Բ. Բարդոն, Ժ. Բելմոնդոն, Ա. Դելոնը, Պ. Ռիշարը, Լուի դը Ֆյունեսը և շատ ուրիշներ:*